թէպէտ զիջան ընկերութեամբ չինել զոհեղին, այլ Հայք ոչ առին յանձն. Դատաւորն եւ Հէօճճէթ Հայոց, թէ եկեղեցին սեփհական է նոցա, և նորոգութիւնն եւս նոցա պատկանի, և թէ հրամայեն օրէնք ելանել 'ի տանիս նորա անարգել 'ի վանացն Յունաց. սակայն Յոյնք և Բգեշխքն ոչ հաճեցան այսմ, նմին իրի յաւելոյր վէճն օրքան զօր։ Տեսեալ Հայոց թէ ոչ կարեն վճարել ինչ յերուսաղէմ, գրեցին զմնդիրն պարագայիւք առ ազգային Պատրիարքարանն, եւ առ Կուսակալն Ասորեաց Էսատ Փաշա։ Մատթէոս Պատրիարք գրով ծանոյց առ Եպարքոսն զգանկատանս Պատրիարքին եւ միաբանութեան Երուսաղէմի։ Յակնարկել նորա յարձանագիրս Կայսերական դիվանին վասն նորոգութեան եկեղեցւոյս՝ ոչ գտաւ ինչ տուեալ Յունաց, ուստի գրեցին առ Կուսակալն Ասորեաց, առ Դատաւորն Երուսաղէմի, եւ առ Վերատեսուչն չինութեանց Նէպի Էֆէնտի, քննել զտեղին պարագայիւք և ծանուցանել 'ի Դուռն, և նոքա յետ քննութեան գրեցին ամբաստան լինելով զոնկարգութենէ և զագահութենէ Հայտար Փաշայի. թէ ո՛րպէս ընդդէմ օրինաց և կանոնաց թիւրէ զգատաստանս, և առանց հարցանելոյ ումեք ինքնագլուխ հրաման տայ Յունաց նորոգել զվանօրայս իւրեանց. զի այսպիսի նորոգութիւնք առանց Կայսերական հրամանի չըլինին, և ոչ ումեք տեսեալ կամ լուեալ իցէ թէ ծախք նորոգութեան վանօրէից յարքունուստ լեալ իցեն, որպէս պարծէր նա, և հարեալ յագահութենէ ոչ լուաւ զաղաչանս Հայոց, և հանդիպեցոյց զնոսա մեծի վնասուց, և թէ եկեղեցին այն սեփհական է նոցա. և այլ այսպիսի բանք երկար։ Հասին այսոքիկ գրեանք 'ի Դուռն, և Զաքարիա Պատրիարք հանեալ զպատճէնս հին վաւերական գրոց, ընդ Իլամի Դատաւորին առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս, եւ Մատթէոս Պատրիարք առաքեաց զայնս գրով իւրով առ Եպարքոսն։ Եւ 'ի սմին ժամանակի անկան 'ի պաշտօնէ Հայտար Փաշա, և Կուսակալն Ասորեաց Էսատ Փաշա, և Նէպի Էֆէնտի կատարեալ զպաշտօն իւր դարձեալ էր 'ի Կոստանդինուպոլիս։ Եպարքոսն զայսոսիկ գրեանս առաքեաց առ Մուդդաղայն վերստին ակնարկել յարձանագրութիւնս. գտին անդ զերկոսին հրովարտակս տուեալ Հայոց և Յու-